Ս. Հ. Մ. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ԱԲՈՐՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Հ. Միության Առողջժողկոմատի 1936 թվի նոյեմբերի 28-ի հրահանգչական նամակը

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

AZERNEŞR

ԱԶԵՐՆԵՇՐ

ՈՒ — 1938 Թ.

618
Ա-15

Cэ 38-Ս
2840

04 AUG 2010

Խ. Ս. Հ. Մ. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

618
Ա-15

# ԱԲՈՐՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խ. Ս. Հ. Միության Առողջժողկոմատի 1936 թվի նոյեմբերի 28-ի հրահանգչական նամակը

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱԶԵՐՆԵՇՐ

ԲԱԳՈՒ — 1938 Թ.

- .01. 2013
7899
ՊԵՏԱԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
57047-66

*Միութենական հանրապետությունների Առողջապահության Ժողովրդական Կոմիսարներին, Ա.Խ.Ս.Հ. Առողջապահության Ժողովրդական Կոմիսարներին, յերկրային և մարզային առողջապահական բաժինների վարիչներին:*

# ԱԲՈՐՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Խ.Ս.Հ. Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը սույն թվի նոյեմբերի 22-ին հաստատեց ստորև բերվող* «Հղիության արհեստական ընդհատման (աբորտի) թույլտվության կարգի մասին կանոնադրություն—ըստ բժշկական ցուցմունքների»:

*Առաջարկում եմ այդ Կանոնադրությունն ընդունել անմիջական ղեկավարության և այն կյանքում կիրառելու համար շտապ կենսագործել հետևյալ միջոցառումները.*

1. *Յերեք օրվա ընթացքում կազմել և ուղարկել ԽՍՀ Միության Առողջժողկոմատին ի հաստատություն՝ այն շրջանային կենտրոնների ցուցակները, որտեղ պետք է կազմակերպվեն աբորտները թույլատրող բժշկական հանձնաժողովներ:*

*Բժշկական հանձնաժողովների տեղծումը պետք է նշել այնպես, որպեսզի մեկ հանձնաժողովն սպասարկի միջին հաշվով յերկու-յերեք վարչական շրջան ըստ տերիտորիայի և ազգաբնակության, ըստ որում հանձնաժողովի տեղը պետք է ընտրվի մի այնպիսի*

շրջանային կենտրոն, վորտեղ կան վորակյալ բժշկական ուժեր:

2. Վերանայել և հաստատել ներկայացված գործող քաղաքային և շրջանային բժշկական հանձնաժողովների անձնակազմը, համաձայնեցնելով այն Կանոնադրության յերկրորդ կետի հետ:

Յերկու մշտական անդամների թվից մեկին հաստատել վորպես ղեկավար (նախագահ) և յուրաքանչյուր անդամին նշել մեկ տեղակալ՝ բացակայության կամ հիվանդության դեպքում:

Քաղաքային Առողջապահական բաժիններին և այն շրջանների շրջանային Առբաժիններին, վորտեղ պետք է գործեն բժշկական հանձնաժողովները, պետք է առաջարկել նախորոք պատրաստելու նաև պահեստային մասնագետների ցուցակներն այն հաշվով, վորպեսզի բժշկական հանձնաժողովի յերրորդ անդամը հրավիրվի հանձնաժողովի Նախագահի կողմից ըստ այդ ցուցակի:

3. Բոլոր քաղառբաժինները և շրջառբաժինները, վորոնք սպասարկվում են տվյալ բժշկական հանձնաժողովի կողմից, պետք է անմիջապես կազմեն յեվ ուղարկեն Հանձնաժողովին իրենց տերիտորիայի հիվանդանոցների ցուցակը, վորտեղ կարելի յե աբորտներ կատարել բժշկական հանձնաժողովի թույլտվությամբ:

4. Միութենական հանրապետությունների Առողջապահության ժողկոմատները պետք է 10 որվա ընթացքում վերանայեն և հաստատեն աբորտների թույլտվության կենտրոնական բժշկական հանձնաժողովների



անձնակազմը, վորոնք կազմակերպվելու յեն յուրաքանչյուր յերկրային և մարզային կենտրոնում, ինչպես նաև հանրապետությունների կենտրոններում, վորոնք մարզային բաժանում չունեն, համաձայն Կանոնադրության 7-րդ կետի: Դրա համար յերկրային (մարզային) առբաժինները և Ավտոնոմ ՍՍՀ Առժողկոմատները պետք է անմիջապես ներկայացնեն Առժողկոմատներին իրենց թեկնածուներին:

5. Աբորտները թույլատրող բժշկական հանձնաժողովներն անհրաժեշտ է ապահովել ստանդարտ ձևերով (կցվում են)—հղիներին ընդունելու ժուռնալներով, աբորտը մերժելու կամ թույլատրելու ակտերով և հաշվետու տեղեկություններով:

Վոչ մրիվ աբորտները գրանցել հիվանդանոցի ընդհանուր ժուռնալների մեջ, իսկ նրանց հիվանդության պատմություններն առանձնացնել առանձին պարտոտեկայք:

Ամենալուրջ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր թույլատրված աբորտի կամ մերժման թույլտվության իր ժամանակին ու ճիշտ դոկումենտացիայի վրա:

Պարբերաբար ստուգել, թե բժշկական հանձնաժողովների և թե հիվանդանոցների աբորտների կատարման մատյաններն ու փաստաթղթերը:

6. Ինչպես նշված է Կանոնադրության մեջ, աբորտներ կատարելու վճարը սահմանում են դաշնակից հանրապետությունների Առժողկոմատները: Այդ վճարը սահմանելիս պետք է ղեկավարվել ոպերացիայի և հիվանդի պահպանման մոտավոր ինքնարժեքով,

յելնելով միջին հաշվով 40–50 ռուբլի յուրաքանչյուր ոպերացիայի համար (ներառյալ հիվանդի պահպանությունը)։

Այդ վճարները մուծելու համար պետք է՝ շրջանային առբաժնի հատուկ հաշիվ բացել Ֆինբաժնում և պահանջել, որպեսզի հղի կինը, որին թույլատրված է աբորտը, ներկայացնի համապատասխան հիվանդանոցին, բժշկական հանձնաժողովի թույլտվության ակտի հետ միասին, նաև սահմանված վճարի մուծման անդորրագիրը։

Ստացված գումարները պետք է համարվեն որպես հատուկ միջոցներ և օգտագործվեն բժշկական հանձնաժողովի աշխատանքի վճարման ու հղի կանանց բուժսպասարկման և պատրոնաժի, և հատկապես այն հղի կանանց, որոնց աբորտի թույլտվություն չի տրված բարելավման ծախսերի համար։

7. Միջոցներ ձեռք առնել նրա համար, որպեսզի ազգաբնակչությունը լայն կերպով իրազեկ լինի աբորտների թույլտվության կարգի, բժշկական ցուցմունքների խիստ բնույթի, բժշկական հանձնաժողովների վայրի և աշխատանքի ժամանակի մասին։

Տեղամասերի, ամբուլատորիաների և կոնսուլտացիաների բժիշկները չպետք է մերժեն հիվանդ հղի կանանց խնդիրներն իրենց նայելու մասին աբորտի միջնորդության կապակցությամբ, միայն այն ձևական հիմունքով, որ աբորտի թույլտվությունը կախված է բժշկական հանձնաժողովից։ Այդ դեպքերում, ինչպես նշված է Կանոնադրության մեջ, տեղամասի կամ ամբուլատորիայի բժիշկը պետք է հիվանդին



ուղարկի համապատասխան բժշկական հանձնաժողովին իր եզրակացությամբ, նշելով հիվանդության դիագնոզը և այն հաստատող օբյեկտիվ տվյալները։

Սակայն այդ նախնական բժշկական դիտումներից չի կարելի պարտադիր ստադիա դարձնել աբորտի քննման գործում — բժշկական հանձնաժողովը չի կարող մերժել հղի կնոջ միջնորդությունը աբորտը թույլատրելու մասին, չնայած որ նա բժշկական նախնական քննություն չի անցել։

8. Կանանց կոնսուլտացիաները և նրանց առընթեր գտնվող սոցիալ-իրավական կաբինետներն իրենց հսկողության տակ պետք է վերցնեն ոչ միայն այն կանանց առողջական դրությունը, որոնց թույլատրված է աբորտ անել, այլ և նրանց, որոնց աբորտ անելը մերժվել է։ Անհրաժեշտ է այդպիսի կանանց ցույց տալ բժշկական մանրակրկիտ օգնություն և ամեն տեսակի բարոյական օգնություն, որպեսզի թույլ չտալ նրանց ընդհատակյա աբորտմախերներին դիմելու։

9. Մինչև այժմ բժշկական հիմնարկները և բժշկական աշխատողներն անթույլատրելի կերպով քիչ ուշադրություն են դարձնում իրենց անմիջական պարտականություններին՝ պրոպագանդա և լուսավորչական աշխատանք տանելու այն ուղղությամբ, որպեսզի կանանց մասսայի մեջ արմատացնել աբորտների լուրջ վնասի և հանցագործության համոզմունքը։ Բժշկական շատ աշխատողներ էլ անթույլատրելի պասսիվությամբ են նայում նաև ընդհատակյա աբորտների դեպքերին, որոնց նրանք հանդիպում են

պրակտիկայում — հետևելով խայտառակ կանոնին՝ թե դա «իմ գործը չէ»:

Այդ անգործունեությանն ու պասսիվությանը պետք է վերջ դնել:

Առբաժինները պարտավոր են մշակելու ձեռնարկների բանվորուհիների, կոլտնտեսուհիների, ծառայողների, տնային տնտեսուհիների միջև տարվող պրոպագանդիստական և լուսավորչական աշխատանքի սիստեմատիկ պլանը, կազմակերպելով զրույցներ աբորտների վնասի մասին, դասախոսություններ, կինոնկարների ցուցադրում և այլն, այդ գործին ներգրավելով՝ բժիշկներին, մանկաբարձուհիներին, հենվելով հասարակական կազմակերպությունների օգնության վրա:

Բժիշկը, մանկաբարձուհին, իրենց պրակտիկայում, բախվելով ընդհատակյա աբորտի հետ և այդ մասին դատախազությանը չհայտնելու դեպքում պետք է խայտառակվեն հասարակական օրգանների, ընկերական դատարանների և իրենց կոլեկտիվների կողմից:

10. Աբորտների հաշվառումն ու հաշվետվությունը տանել ըստ կցվող ձևերի, վորոնք հաստատված են Ժողովրդատնտեսական Հաշվառման Կենտվարչության կողմից, օգտագործելով ստացված տվյալները բժշկական հանձնաժողովների օպերատիվ ղեկավարման համար՝ խստիվ ղեկավարվելով օրենքներով:

ԽՍՀՄ-ի Առողջապահության ժողովրդական
կոմիսար Գ. ԿԱՄԻՆՍԿԻ
Նոյեմբերի 28. 1936 թ.



## Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մոսկվա, Կրեմլ, № 2012, 22 նոյեմբերի 1936 թ.
Աբորտների թույլտվության կարգն ըստ բժշկական ցուցմունքների.

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

Հաստատել ԽՍՀ Միության Առողջապահության ժողովրդական կոմիսարի կողմից ներկայացված կանոնադրությունը հղիության արհեստական ընդհատման (աբորտի) օպերացիայի թույլտվության կարգի մասին՝ ըստ բժշկական ցուցմունքների (տես հավելվածը):

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների
խորհրդի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ.

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների
խորհրդի գործերի կառավարիչ՝

Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ.

Հավանված՝ ԽՍՀ Միության Ժողկոմխորհի
1936 թվի նոյեմբերի 22-ի № 2012 վորոշմամբ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ (ԱԲՈՐՏԻ) ՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԸՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ

ԽՍՀՄ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի «Աբորտներն արգելելու մասին» վորոշումը բժշկական աշխատողներից պահանջում է ամենաճիշտ և բարեխիղճ կատարում:

Խորհրդային բժիշկը պետք է շատ լավ հասկանա, վոր աբորտը վոչ միայն վնասակար է կնոջ առողջության համար, այլ և հանդիսանում է սոցիալական լուրջ չարիք, վորի դեմ մղվող պայքարը յուրաքանչյուր գիտակից քաղաքացու և ամենից առաջ, բժշկական աշխատողների պարտքն է:

Բարեխիղճ խորհրդային բժիշկն իր պրակտիկայում չպետք է թույլ տա ամենափոքր նահանջ հիմնական կանոնից, վորը շարադրված է ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի վորոշման մեջ, վոր աբորտն որենքով արգելված է և թույլատրվում է վորպես բացառություն միայն այն դեպքերում, յերբ «հղիության շարունակումը վտանգ է ներկայացնում կյանքին, կամ հղի կնոջ առողջությանը ծանր վնաս է սպառնում, ինչպես նաև ժառանգաբար անցնող ծանր հիվանդությունների առկայության դեպքում»:



Այն հիվանդությունները, վորոնց առկայությամբ թույլատրվում է աբորտների կատարումը, թված են ԽՍՀՄ ի Առժողկոմատի կողմից հաստատված աբորտի մասին բժշկական ցուցմունքներում (կցվում են):

Այդ ցուցմունքների յուրաքանչյուր կամայական մեկնաբանություն, նրանց յուրաքանչյուր ընդլայնում կատեգորիկ կերպով արգելվում է: Այն բժիշկը, վորը վոչ բավարար խստությամբ ու բարեխղճորեն կկիրառի սահմանված ցուցմունքները, չխոսելով արդեն ուղղակի խախտումների մասին, սպասում է որենքով սահմանված քրեական պատիժ:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ գտնելով աբորտի թույլտվության կարգի կազմակերպման որենքի խստիվ պահպանման ապահովումը, ԽՍՀ Միության Առժողկոմատը ի կատարումն ԽՍՀ Միության Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշման սահմանում է ըստ բժշկական ցուցմունքների աբորտների կատարման գործերի քննության և լուծման հետևյալ կանոնները.

1. Ոպերացիայի միջոցով հղիության ընդհատումը (աբորտը) թույլատրվում է բացառապես այն հիվանդությունների առկայությամբ, վորոնք նշված են կցվող բժշկական ցուցմունքներում:

2. Յուրաքանչյուր առանձին դեպքերում այն հիվանդության առկայությունը, վորը հիմք է հանդիսանում աբորտի թույլտվության համար, սահմանում է բժշկական հանձնաժողովը յերեք բժիշկների

կազմով, այդ թվում յերկու մշտական անդամներ՝ մանկաբարձ-գինեկոլոգի և ներքնաբուժի և յերրորդի, վորը հրավիրված ե հանձնաժողովին մասնակցելու, այն մասնագիտության բժշկի, վորի բնագավառին ե վերաբերում սահմանված հիվանդությունը:

Հանձնաժողովի մշտական անդամները նշանակվում են յերկրային (մարզային) առողջբաժինների կամ հանրապետությունների Առողջապահական ժողկոմատների կողմից, վորոնք չունեն մարզային բաժանմունք, մի տարի ժամանակով:

3. Աբորտների թույլատվության բժշկական հանձնաժողովները կազմակերպվում են կանանց կոնսուլտացիաներին կից յուրաքանչյուր քաղաքում, ինչպես նաև շրջանային կենտրոններում այն ցուցակներով, վորոնք կազմված են միութենական հանրապետությունների Առժողկոմատների կողմից և հաստատված են ԽՍՀՄ-ի Առժողկոմատի կողմից: Շրջանային կենտրոններում, վորոնք չունեն կանանց կոնսուլտացիաներ, հանձնաժողովներն ստեղծվում են շրջանային հիվանդանոցներին կից:

Յուրաքանչյուր հանձնաժողով սպասարկում ե իրեն կցված վորոշ շրջան (տերիտորիա):

Ծանոթություն.— Գյուղական տեղամասային բժիշկներն այն դեպքերում, յերբ հիվանդները դիմում են իրենց՝ պահանջելով աբորտ կատարել, այդպիսի հիվանդներին, ըստ բժշկական ցուցմունքների, ուղարկում են բժշկական հանձնաժողովներին, իրենց յեզրակացության հետ միասին, վորտեղ պետք ե ցույց տրված լինեն



հիվանդության դիագնոզը և այն հաստատող օբյեկտիվ տվյալները:

4. Բժշկական հանձնաժողովը՝ յուրաքանչյուր աբորտ կատարելու դիմումը ներկայացնելուց վորոշում պետք ե հանի 5 օրից վոչ ուշ:

5. Այն դեպքերում, յերբ ամբուլատորական կարգով հնարավոր չե յեզրակացություն հանել հղի կնոջ հիվանդության բնույթի մասին, ըստ սահմանված ցուցմունքների, հանձնաժողովն իրավունք ունի ուղարկելու հիվանդին ստացիոնար՝ ստացիոնարական հետազոտման համար:

6. Առանձին դեպքերում աբորտի առթիվ անհատական բժշկական ցուցմունքների առկայությամբ, վորոնք չեն նախատեսնված Առժողկոմատի կողմից, վորոնք սակայն ակնհայտ ծանր կերպով սպառնում են հղի կնոջ առողջությանը, բժշկական հանձնաժողովն իր յեզրակացությամբ հղի կնոջն ուղարկում ե կենտրոնական հանձնաժողովին:

7. Կենտրոնական հանձնաժողովը կազմակերպվում ե սկզբնական բժշկական հանձնաժողովների աշխատանքի ղեկավարման համար՝ յերկրային (մարզային) առբաժիններում և հանրապետությունների Առժողկոմատներում, վորոնք չունեն մարզային բաժանում, յերեք մասնագետ բժիշկներից՝ Առբաժնի վարիչի կամ Առողջապահության ժողովրդական կոմիսարի անձնական նախագահությամբ: Կենտրոնական հանձնաժողովի կազմը նշանակվում ե համապատասխան միութենական հանրապետության Առողջապահության Ժողկոմատի կողմից:

8. Աբորտ կատարելու յուրաքանչյուր թույլտվություն պետք է ձևակերպվի հատուկ ակտով՝ նշելով հղի կնոջ անունը, հայրանունը և ազգանունը, տարիքը, հղիության ժամկետը, հիվանդության ճիշտ դիագնոզը (բժշկական ցուցմունքներով սահմանված անվանացանկով), ոբյեկտիվ տվյալները, որոնք հաստատում են դիագնոզը, ինչպես նաև ոպերացիան կատարելու հակացուցմունքների պակասությունը:

Ակտը գրվում է յերկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրը պետք է հաստատվի հանձնաժողովի անդամների ստորագրությամբ: Ակտի մեկ օրինակը տրվում է հղի կնոջ ձեռքը ներկայացնելու համար՝ որոշ (ըստ ցուցակի, Առբաժնի կողմից սահմանված) բժշկական ստացիոնար հիմնարկին, որտեղ պետք է կատարվի աբորտը, մյուս օրինակը պետք է մնա հանձնաժողովի գործերում:

Նույն կարգով ակտ է կազմվում աբորտը մերժելու դեպքում:

9. Աբորտի ոպերացիան կարող է կատարվել բժշկական սահմանված ցուցմունքներով՝ բացառապես հիվանդանոցներում կամ ծննդաբերական տներում: Հղի կնոջ մոտ աբորտի թույլտվության ակտի բացակայության դեպքում, որը պետք է տրված լինի համապատասխան բժշկական հանձնաժողովի կողմից, բժշկական հիմնարկը, որտեղ ուղարկված է հղի կինը, իրավունք չունի աբորտի կատարելը մերժելու:

10. Աբորտները կատարվում են վճարով: Վճարի չափը սահմանվում է միութենական հանրապետության Առժողկոմատների կողմից:



11. Աբորտի յուրաքանչյուր ոպերացիայի համար կազմվում է, ըստ ընդհանուր կանոնների, հիվանդության պատմություն և, բացի դրանից, յուրաքանչյուր ոպերացիա գրանցվում է հատուկ ժուռնալի մեջ, որի ձևը սահմանում է ԽՍՀՄ-ի Առժողկոմատը:

Բժշկական հանձնաժողովի կողմից տրված աբորտի թույլտվության ակտը պետք է պահվի բուժող հիմնարկում, որը կատարում է աբորտը, հիվանդության պատմության հետ միասին:

12. Վոչ լրիվ աբորտով հղի կանայք (հիվանդանոցից դուրս սկսված) ընդունվում են բացառապես հիվանդանոցներում կամ դրա համար հատկացված հատուկ բուժհաստատություններում: Վոչ լրիվ աբորտները դոկումենտացիայի յեն յենթարկվում հիվանդության պատմության և ժուռնալի գրանցումների մեջ:

Վոչ լրիվ աբորտով հղի կնոջ հղիությունն ընդհատելու արտաքին միջամտության ցուցանիշներ ունեցող դեպքում հղի կնոջն ընդունող բժիշկը ճշտությամբ պետք է նրա հիվանդության պատմության մեջ գրի կնոջ ստատուսը և հայտնի այդ դեպքի մասին դատախազությանը:

13. Յերկրային (մարզային) առբաժնի վարիչը և Առժողկոմատները լիակատար պատասխանատվություն են կրում բժշկական հանձնաժողովների ճիշտ աշխատանքի համար՝ ըստ ներկա կանոնադրության:

Բժշկական հանձնաժողովի անդամները սահմանված բժշկական ցուցմունքների բացակայության դեպքում աբորտներ թույլատրելու համար յենթարկվում են քրեական պատժի, վոր նախատեսված է ԽՍՀՄ-ի կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի վորոշման յերկրորդ հոդվածով:

ԽՍՀ Միության Առողջապահության ժողովըրդական կոմիսար՝ Գ. ԿԱՄԻՆՍԿԻ



# ԲԺՇԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ (ԱԲՈՐՏԻ) ՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԹԻՎ

Աբորտի առթիվ բժշկական ցուցմունքներն են հանդիսանում.—

1. Սրտի և արյունատար անոթների ծանր և կայուն որգանական հիվանդությունները. ենդոկարդիտները սրտի լեզվակների անատոմիական հիվանդությամբ, սրտի լեզվակների անատոմիական հիվանդությամբ և սրտի մկանունքների հիվանդությունն անբավարար արյան շրջանառության դեպքերում (ուռուցքներ, լճացած լյարդ, ցիանոտ շնչարգելություն, և կայուն գիպերտոնիա, անկախ հղիությունից):

2. Յերիկամունքների բորբոքման դեգեներատիվ և կարծրացող փոփոխությունների կայուն ձևեր և նրանց ֆունկցիաների սահմանափակմամբ:

3. Յերկկողմանի նեֆրոլիտիազիս (ռենտգենով սահմանված):

4. Թոքախտի բաց ձևեր, ինչպես նաև թոքերի և լանջաթաղանթի փակ թոքախտային փոփոխությունները կայուն ինտոքսիկացիաների հետ միասին:

5. Միզատար ճանապարհների վորովայնամաշկի, փորատիքի, վոսկորների, հոդերի, կոկորդի թոքախտ:

6. Լյարդի խրոնիկական պարենխիմատոզային

5704-66
ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

հիվանդություն՝ Փունկցիաների արտահայտված խանգարումով։

7. Բազեդովի հիվանդություն՝ սրտանոթային սիստեմի արտահայտված պակասությամբ, կամ այլ կայուն ինտոքսիկացիաներով։

8. Չարորակ արյան պակասություն (բիրմերյան ձև) և հղի կանանց չարորակ սակավարյունություն)։

9. Լեյկոզներ (սպիտակարյունություն)։

10. Հիվանդներ, վորոնք տառապում են կամ տառապել են չարորակ ուռուցքներով։

11. Ընկնավորություն — հաստատված բուժհիմնարկի կողմից։

12. Տեսողության նյարդի ատրոֆիաներ կամ նեվրիտներ, վորոնք առաջացել են հղիության հետևանքով, կամ ծայրամասային անոթային սիստեմի հիվանդություն։

13. Ցեղջերաթաղանթի ծանր հիվանդացում, օրգանիզմի հյուծման հետևանքով, կամ էնդոկրինյան քայքայում, վորոնք առաջացել են հղիության հետևանքով (օրինակ, գլիպոտիոն-կերատիտ, կերատոկոնուս)։

14. Կոնքի սեղմումը 7,5 սմ և ցած խական կոնյուգատով՝ կոնքի զգալի ձևափոխմամբ (դեֆորմացիայով) զանազան ծագումի, ինչպես նաև հեշտոցի զգալի սպիավոր փոփոխումները, վորոնք խանգարում են ծննդաբերությանը՝ ծնելու բնական ճանապարհների միջոցներով։

15. Աբորտը թույլատրվում է, յեթե մայրը, հայրը կամ յերեխաներից մեկն ունեցել են կամ ունեն



հետևյալ հիվանդություններից մեկն ու մեկը, վորը կարող է ժառանգաբար անցնել՝ գեմոֆիլիա, ապշություն, գենուինական ընկնավորություն, շիզոֆրենիայի կամ մանյակային դեպրեսիվ պսիխոզի ծանր ձևերը, վորոնք յենթարկվել են հիվանդանոցային բուժման. աչքի ժառանգական ծանր հիվանդություններ, վորոնք տանում են դեպի կուրություն. ժառանգական խուլություն ու համրություն. Նյարդային սիստեմի ժառանգական զարգացող սիստեմային հիվանդություններ։ Մկանունքային զարգացող ատրոֆիա, ժառանգական ատաքսիա։

## Հղիության արհեստական ընդհատման (աբորտի) օպերացիայի հակացուցումները.

Արհեստական աբորտի օպերացիայի հակացուցումներ հանդիսանում են.

1. Սուր և վոչ սուր գոնորեա (սուսանակ)։

2. Սուր և վոչ սուր վուլվովագինիտներ և բարտոլինիտներ յուրաքանչյուր ծագումի ինչպես նաև ֆուրունկուլներ սեռային օրգանների վրա։

3. Երոզիաներ արգանդի պարանոցից ժահրաթորումների առկայությամբ։

4. Կցուկներում և նրանց շրջապատող վորովայնային հյուսվածքում բորբոքվող պրոցեսների առկայությունը։

5. Բոլոր տեղական թարախակալված և ընդհանուր սուր ինֆեկցիոն հիվանդություններ։

Ծանոթություն.— Աբորտի համար հակացուցումների առկայության դեպքում բժշկական

հանձնաժողովը պետք է նրան զուգադրի հիմնական հիվանդության հետ, վորի առթիվ յենթադրվում է կատարել աբորտը և վորոշի հարցը, մանրակրկիտ կշռադատելով, թե ինչն է լավ կնոջ առողջության համար՝ պահպանել հղիությունը, թե, ընդհատել նրան վորոշ ռիսկով:

ԽՍՀ Միության Առողջապահության ժողովըրդական Կոմիսար՝ Գ. ԿԱՄԻՆՍԿԻ



## Խ.Ս.Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

*1936 թվի հունիսի 27-ի № 65/1134 վորոշումը*

Աբորտներն արգելելու, ծննդկանների նյութական ոգնությունն ավելացնելու, բազմանդամ ընտանիքավորներին պետական ոգնություն սահմանելու, ծննդական տների, մանկամսուրների և մանկապարտեզների ցանցի ընդարձակման, ալիմենտները չվճարելու համար քրեական պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության որենսդրության մեջ մի քանի փոփոխություններ մտցնելու մասին

*Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, վոր սկիզբ դրեց ամեն մի դասակարգային շահագործման վոչնչացման, դասակարգերի իսկ վոչնչացման, միաժամանակ սկիզբ դրեց նաև կնոջ կատարյալ ու վերջնական ազատագրման:*

*Աշխարհի վոչ մի յերկրում քաղաքական, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում ու ընտանեկան կենցաղում կինը չի ոգտվում այնպիսի լրիվ իրավահավասարությամբ, ինչպես ԽՍՀՄ-ում:*

*Աշխարհի վոչ մի յերկրում կինը, վորպես մայր ու քաղաքացուհի, վորի վրա ընկած է ծնելու և քաղաքացիներ դաստիարակելու մեծ ու պատասխանատու պարտականությունը, չի ոգտվում այնպիսի*

հարգանքով և օրենքի պաշտպանությամբ, ինչպես ԽՍՀՄ-ում:

Սակայն քաղաքացիական պատերազմից ու զինված ինտերվենցիայից հետո առաջին տարիներին սկըսված տնտեսական քայքայումը յերկրում և կանանց նախահեղափոխական եպոխայից ժառանգած կուլտուրական մակարդակի անբավարարությունը, թույլ չըտվին նրանց անմիջապես լիովին օգտագործել օրենքով տրամադրված իրավունքները և ապագայի համար առանց յերկյուղելու կատարել քաղաքացուհու ու մոր իրենց պարտականությունները, վորը պատասխանատու յե իր յերեխաների ծննդի և սկզբնական դաստիարակման համար: Այդ առնչությամբ խորհրդային իշխանությունը 1920 թվի նոյեմբերի 18-ին կանանց համար թույլատրեց աբորտներ կատարելը (հղիության արհեստական ընդմիջում), ինչպես գրում ե Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատը և Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատը, քանի վոր «անցյալի բարոյական մնացորդները և ներկայի տնտեսական ծանր պայմանները դեռևս հարկադրում են կանանց մի մասին՝ դիմել այդ օպերացիային» (Օրենքների Ժողովածու, 1920 թիվ № 90 հոդ. 471):

Լենինը դեռևս 1913 թվին գրել ե, վոր գիտակից բանվորները «անպայման թշնամի յեն նեոմալտուսականությանը, կոպտացած ու յեսասեր մեշչանական զույգի համար այդ հոսանքին, վորը վախեցած շշընջում ե՝—«աստված տա ինքներս մի կերպ պահվենք, իսկ յերեխաներ արդեն ավելի լավ ե չունենալ»:



Սակայն, ըմբոստանալով աբորտի, վորպես սոցիալական չարիքի դեմ, Լենինը բացահայտ կերպով անբավարար եր համարում նրա դեմ կռվելու համար միայն աբորտն արգելող օրենքները: Դեռ ավելին, նա մատնանշում եր, վոր կապիտալիզմի պայմաններում այդ օրենքներն արտացոլում են միայն «տիրող դասակարգերի կեղծավորությունը»,— վորովհետև նրանք «չեն բուժում կապիտալիզմի ցավերը, այլ նրանց դարձնում են առանձնապես վատորակ, առանձնապես ծանր՝ ճնշված մասսաների համար»: (16-րդ հատոր, եջ 498-499):

Միայն սոցիալիզմի պայմաններում, ուր բացակայում ե մարդու շահագործումը մարդու կողմից և վորտեղ կինը հասարակության իրավահավասար անդամ ե, իսկ աշխատավորների նյութական բարեկեցության առաջադիմող բարձրացումը հասարակական զարգացման օրենքն ե հանդիսանում, կարելի յե լուրջ կերպով դնել պայքարն աբորտի դեմ, այդ թվում նաև արգելիչ օրենքների միջոցով:

Կապիտալիստական շահագործման վոչնչացումը ԽՍՀՄ-ում, աշխատավորների նյութական բարեկեցության աճը և քաղաքական ու կուլտուրական մակարդակի հսկայական աճը թույլ են տալիս դնել Առողջապահության Ժողկոմատի և Արդարադատության Ժողկոմատի 1920 թվի նոյեմբերի 18-ի վորոշման վերանայման հարցը:

Կանանց ու նրանց յերեխաների նյութական անհրաժեշտ ապահովումը, պետական օգնությունը

բազմանդամ ընտանիքներին, ծննդաբերական տների, մանկամսուրների ու մանկապարտեզների ցանցի առավելագույն զարգացումը, ամուսինների առանձին ապրելու դեպքում յերեխայի հոր կողմից նրա պահպանման համար վճարման յենթակա գումարի մինիմումի օրենսդրական սահմանումը մի կողմից և աբորտների արգելումը մյուս կողմից, յերեխաների պահպանման համար դատարանի վորոշած միջոցները չարամտորեն չվճարելու համար պատիժն ուժեղացնելու հետ միասին՝ ամուսնալուծության օրենսդրության մեջ մի քանի փոփոխություններ մտցնելով, ընտանիքին յեվ դեպի ընտանեական պարտականությունները թեթեվամտորեն վերաբերվելու դեմ պայքարելու նպատակով,— այդ են այն ուղիները, վորի վրա պետք կանգնել այն մեծ, ամբողջ ազգաբնակությանը շոշափող հարցը լուծելու համար: Այդ ուղղությամբ խորհրդային կառավարությունն ընդառաջում է աշխատավոր կանանց բազմաթիվ դիմումներին:

Շարադրվածի առնչությամբ և հաշվի առնելով նախագծի քննարկման ժամանակ քաղաքացիների կողմից արված վորոշ դիտողությունները, ԽՍՀ Միության Կենտգործկոմն ու Ժողկոմխորհը վորոշում են.

### 1. Աբորտներն արգելելու մասին

1. Աբորտների վնասակարությունը հաստատված լինելու առնչությամբ արգելել նրանց կատարումը, ինչպես հիվանդանոցներում և հատուկ բուժական հաստատություններում, նույնպես և բժիշկների տանն



ու հղիների մասնավոր բնակարաններում: Աբորտներ կատարելը թույլատրել բացառապես այն դեպքերում, յերբ հղիության շարունակությունն սպառնալիք է ներկայացնում հղի կնոջ կյանքին կամ ծանր վնաս է սպառնում առողջությանը, նույնպես և ծնողների ժառանգությամբ հաղորդվող ծանր հիվանդությունների առկայության դեպքում և միայն հիվանդանոցների ու ծննդաբերական տների պայմաններում:

2. Հիվանդանոցից դուրս կամ հիվանդանոցում, սակայն մատնանշած պայմանների խախտմամբ աբորտ կատարելու դեպքում քրեական պատիժ սահմանել աբորտ կատարող բժշկի համար՝ մի տարուց մինչև յերկու տարի բանտարկություն, հակասանիտարական պայմաններում կամ բժշկական հատուկ կրթություն չունեցողների կողմից աբորտներ կատարելու համար սահմանել քրեական պատիժ՝ յերեք տարուց վոչ պակաս բանտարկություն:

3. Կնոջն ստիպելու աբորտ կատարելու համար սահմանել քրեական պատիժ՝ բանտարկություն մինչև յերկու տարի:

4. Հղի կանանց նկատմամբ, վորոնք աբորտ են կատարում խախտելով նշված արգելումը, սահմանել վորպես քրեական պատիժ հասարակական պարսավանք, իսկ աբորտների արգելման օրենքը յերկրորդ անգամ խախտելու դեպքում՝ տուգանք մինչև 300 ռուբլի:

## 2. Պետության կողմից ծննդկաններին տրվող նյութական օգնությունը մեծացնելու և բազմանդամ ընտանիքներին պետական օգնություն սահմանելու մասին.

5. *Սոցիալական ապահովագրության օրգաններում ապահովագրված ինչպես բանվորուհի, այնպես էլ ծառայող ծննդկանների նյութական դրությունը բարելավելու նպատակով մեծացնել պետական սոցիալական ապահովագրման միջոցներից նորածինի խնամքի համար անհրաժեշտ առարկաներ ձեռք բերելու համար տրվող նպաստների չափերը՝* 32 *ռուբլուց մինչև* 45 *ռուբլի:*

6. *Երեխային կերակրելու համար մորը տրվող նպաստի չափն ամսական* 5 *ռուբլուց դարձնել* 10 *ռուբլի:*

7. *Չապահովագրված աշխատավոր կանանց՝ կոոպերատիվ արտելների և ձեռնարկությունների անդամների նկատմամբ սահմանել, որ նշված նպաստները տան փոխադարձ օգնության կոոպերատիվ դրամարկղները նույն հիմունքներով:*

8. *Բեկանել այն սահմանափակումը, որ սահմանված է ծառայող կանանց համար Աշխատանքի օրենքների օրենսգրքով (հոդված* 132*), նրանց հավասարեցնելով բանվորուհիներին արձակուրդի տևողության տեսակետից, որը տրվում է ծննդաբերությունից առաջ և հետո (*56 *օր ծննդաբերությունից առաջ և* 56 *օր ծննդաբերությունից հետո):*

9. *Քրեական պատիժ սահմանել կանանց հղիության պատճառով աշխատանքի ընդունելուց հրաժարվելու համար, նույն պատճառներով աշխատավարձն իջեցնելու համար, օրենքում նախատեսված հղի կնոջ վերջին վեց ամիսների աշխատանքի հաշվով նախկին աշխատավարձի պարտադիր պահպանումը՝ միաժամանակ նրան ավելի հեշտ աշխատանքի փոխադրելով:*

10. *Վեց երեխա ունեցող բազմանդամ ընտանիքավոր մայրերի պետական նպաստը սահմանել տարեկան երկու հազար ռուբլի՝ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդի ժամանակ՝ երեխայի ծննդյան օրից սկսած հինգ տարվա ընթացքում, իսկ տասը երեխա ունեցող մայրերի համար յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան ժամանակ* 5 *հազար ռուբլի միանվագ պետական նպաստ և երկրորդ տարվանից՝ երեք հազար ռուբլի տարեկան նպաստ, որը տրվում է երեխայի ծննդյան օրվանից սկսված հետևյալ չորս տարիների ընթացքում, սույն հոդվածը տարածելով նաև այն ընտանիքների վրա, որոնք օրենքի հրատարակման մոմենտին կունենան համապատասխան քանակությամբ երեխաներ:*



## 3. Ծննդաբերական տների ցանցի ընդլայնման մասին.

*Հանձնարարել միութենական հանրապետությունների Առժողկոմատներին.*

11. *Քաղաքներում, արդյունաբերական և շրջանային կենտրոններում ապրող ծննդկաններին հատուկ ծննդաբերական տներում, ծննդաբերական օգնությամբ լրիվ ընդգրկելու նպատակով մինչև* 1939 *թ. հուն-*

վարի 1-ը կառուցել և շահագործման մեջ դնել 11 հազար նոր ծննդաբերական մահճակալներ, որոնցից՝

1936 թվի պլանով նախագծված 4,200 մահճակալների լրացուցիչ կերպով 2,000 մահճակալ,

1937 թվին 4,000 »»

1938 թվին 5,000 »»

12. Գյուղական վայրերում ծննդականներին ցույց տրվող ստացիոնար ծննդաբերական օգնությունը մեծացնելու նպատակով, կառուցել և շահագործման մեջ դնել 32 հազար ծննդաբերական մահճակալ, դրանցից պետական բյուջեյի հաշվին՝ 16 հազար մահճակալ՝ գյուղական հիվանդանոցներին կից ծննդաբերական բաժանմունքներում և 16 հազար մահճակալ՝ կոլտնտեսային ծննդաբերական տներ կազմակերպելու միջոցով, դրանց կազմակերպման արժեքի 75 տոկոսն ի հաշիվ կոլտնտեսությունների և 25 տոկոսն ի հաշիվ պետական բյուջեյի:

Այդ թվում.

1936 թվի պլանով նախագծվածին լրացուցիչ կերպով 1936 թվին 4,3 հազար ծննդաբերական մահճակալներ գյուղական հիվանդանոցներին կից և հինգ հազար ծննդաբերական մահճակալներ կոլտնտեսային ծննդաբերական տներին կից,

հիվանդանոցներին կից 4,000 մահճակալ և կոլտնտեսային ծննդաբերական տներին կից 4,000 մահճակալ:

1937 թվին՝ հիվանդանոցներին կից 6·000 մահճակալ և կոլտնտեսային ծննդաբերական տներին կից—6,000 մահճակալ 1938 թվին՝ հիվանդանոցներին կից—6·000 և կոլտնտեսային ծննդաբերական տներին կից—6·000 մահճակալ:



13. Ծննդաբերական տների օգնությամբ չսպասարկվող ծննդականներին տանը մանկաբարձական օգնությամբ ապահովելու նպատակով մինչև 1939 թվի հունվարի 1-ը ծավալել 14 հազար 400 նոր մանկաբարձական կետեր, դրանցից՝

1936 թվին՝ 2,700 մանկաբարձական կետ գյուղում և 1,370 մանկաբարձուհի նոր կոլտնտեսային ծննդաբերական տներին կից:

1937 թվին՝ 5,000 մանկաբարձական կետ գյուղում և 2,00 մանկաբարձուհի նոր կոլտնտեսային ծննդաբերական տներին կից:

1938 թվին՝ 6,700 մանկաբարձական կետ գյուղում և 2,000 մանկաբարձուհի նոր կոլտնտեսային ծննդաբերական տներին կից:

## 4. Մանկամսուրների ցանցի ընդլայնման մասին.

14. Մինչև 1939 թվի հունվարի 1-ը կրկնապատկել քաղաքներում, խորհտնտեսություններում, բանչեններում և երկաթուղային տրանսպորտում երեխաների համար մսուրային մահճակալների գոյություն ունեցող ցանցը, դրանց ընդհանուր թիվը հասցնելով 800 հազար մահճակալի, կառուցելով և շահագործման մեջ դնելով՝

1936 թվի պլանով նախագծված 34,000 մահճակալին լրացուցիչ կերպով

| | | |
|---|---|---|
| 1936 թվին | 100,000 | նոր մահճակալ |
| 1937 թվին | 150,000 »» | »» |
| 1938 թվին | 150,000 »» | »» |
| Ընդամենը | 400·000 »» | »» |

15. Գյուղական վայրերում մինչև 1939 թվի հունվարի 1-ը կրկնապատկել ինչպես մշտական, այնպես էլ սեզոնային կոլտնտեսային մանկամսուրների մսուրային մահճակալների գոյություն ունեցող ցանցը՝ մահճակալների թիվը մեծացնելով մշտական մանկամսուրներում՝ 500,000 և սեզոնային մանկամսուրներում չորս միլիոն մահճակալով, որից՝

1936 թվի պլանով նախագծված 70,000 մահճակալին լրացուցիչ կերպով կոլտնտեսային մշտական մանկամսուրներում՝

| | | |
|---|---|---|
| 1936 թվին | 100·000 | մահճակալ |
| սեզոնային մանկամսուրներում 1936 թվին նախագծված մեկ միլիոն մահճակալին լրացուցիչ կերպով | 500,000 | »» |
| 1937 թվին մշտական կոլտնտեսային մանկամսուրներում | 200,000 | »» |
| սեզոնային մանկամսուրներում | 1,500,000 | »» |
| 1938 թվին մշտական կոլտնտեսային մանկամսուրներում՝ | 200·000 | »» |
| սեզոնային մանկամսուրներում | 2,000,000 | »» |

Նշված ցանցի ծավալման վերահսկողությունը



դնել միութենական հանրապետությունների Առողջժողկոմատների և յերկրային, մարզային ու շրջանային գործադիր կոմիտեների վրա:

16. Քաղաքներում և արդյունաբերական վայրերում 1937 թվի հունվարի մեկից մանկամսուրների աշխատանքը կատարել յերկու հերթափոխությունով, որական 16 ժամ, ներառյալ նաև հանգստյան որերը:

17. Առաջարկել միութենական հանրապետությունների Առողջժողկոմատներին նոր բացվող հիմնարկությունները ապահովել համապատասխան կադրերով, միջին-բժշկական անձնակազմի պատրաստման համար 1936 թվի հատկացումների վրա լրացուցիչ կերպով ավելացնելով 15 միլիոն ռուբլի:

18. Առաջարկել միութենական հանրապետությունների Առժողկոմատներին յերեք տարվա ընթացքում — մինչև 1939 թվի հունվարի մեկը լրացուցիչ կերպով կառուցել կաթի 800 նոր խոհանոց քաղաքներում արդյունաբերական և շրջանային կենտրոններում՝ մինչև յերեք տարեկան յերեխաներին սնելու համար, այդ խոհանոցներից մատակարարել — ընդգրկելով 1,5 միլիոն յերեխա և ծավալելով՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1936 թվին | 1-ին | կատեգորիայի | 30 | խոհանոց (յուրաքանչյուր խոհանոց 83000 ռուբլի արժողությամբ) |
| | 2-րդ | » | 100 | » (յուրաքանչյուր խոհանոցը 65000 ռուբլու արժողությամբ) |
| 1937 թվին | 1-ին | » | 70 | » |
| | 2-րդ | » | 200 | » |
| 1938 թվին | 1-ին | » | 100 | » |
| | 2-րդ | » | 300 | » |

5. Մանկապարտեզների ցանցի ընդլայնման մասին.

19. Յերեք տարվա ընթացքում քաղաքներում, ֆաբրիկա-գործարանային շրջաններում և յերկաթուղային տրանսպորտում ստացիոնար մանկապարտեզների գործող ցանցը ընդարձակել, հասցնելով այն (մանկապարտեզների գործող ցանցի 700.000 տեղերի դիմաց) մինչև 1939 թվի հունվարի 1-ը 2.100 հազար տեղի և խորհտնտեսություններում, գյուղական վայրերի ձեռնարկություններում ու հիմնարկություններում մինչև 300.000 տեղի՝ գործող ցանցի 130.000 տեղի դիմաց, վորի համար կառուցել և շահագործման մեջ մտցնել՝

| | | |
|---|---|---|
| 1936 | թվին՝ քաղաքներում ֆաբրիկա-գործարանային ավաններում և յերկաթուղային տրանսպորտում 1936 թվի պլանով նախագծված 250.000 տեղին լրացուցիչ կերպով ևս | 150.000 տեղ |
| | խորհտնտեսություններում և գյուղական վայրերի ձեռնարկություններում ու հիմնարկություններում. մանկապարտեզների մեծացման պլանը 1936 թվի համար թողնել նախկին | 60.000 տեղը |
| | (Ընդամենը | 190.000 տեղ) |
| 1937 | թվին քաղաքներում, ֆաբրիկ-գործարանային շրջաններում յեվ յերկաթուղային տրանսպորտում | 300.000 » |
| | խորհտնտեսություններում յեվ գյուղական վայրերի ձեռնարկություններում ու հիմնարկություններում | 60.000 տեղ |
| 1938 | թվին քաղաքներում, ֆաբրիկա-գործարանային շրջաններում յեվ յերկաթուղային տրանսպորտում | 700.000 » |
| | խորհտնտեսություններում յեվ գյուղական վայրերի ձեռնարկություններում՝ | 50.000 » |



20. Մինչև 1939 թվի հունվարի մեկը ծավալել ստացիոնար մանկապարտեզները կոլտնտեսություններում, գոյություն ունեցող ցանցի 400.000 տեղին՝ լրացուցիչ կերպով ավելացնել ևս 700.000 տեղ, շահագործման մեջ մտցնելով՝

| | | |
|---|---|---|
| 1936 | թվի համար նախագծված 150.000 տեղին | |
| 1936 | թվին՝ | 50.000 տեղ |
| | | (Ընդամենը 200.000 տեղ) |
| 1937 | թվին՝ | 240.000 » |
| 1938 | թվին՝ | 260.000 » |

Նույն ժամկետում մանկական սեզոնային նախադպրոցական հրապարակներում ընդգրկել կոլտնտեսային բոլոր յերեխաներին, վորի համար ծավալել՝

| | | |
|---|---|---|
| 1936 | թվին (ըստ 1936 թվի պլանի) | 4.500.000 տեղ |
| 1937 | թվին՝ | 7.800.000 » |
| 1938 | թվին՝ | 10.700.000 » |

Գյուղական վայրերում մանկապարտեզների և մանկական նախադպրոցական սեզոնային հրապարակների ցանցի ծավալման հսկողությունը դնել միութենական

հանրապետությունների լուսժողկոմատների, յերկրային, մարզային և շրջանային գործադիր կոմիտեների վրա։

21. Պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին արդեն 1936 թվի 2-րդ կեսում պատրաստել 50.000 դաստիարակներ, այդ նպատակով այդ նոր բացվող մանկապարտեզների համար կադրերի պատրաստմանը հատկացնելով 1936 թվի հատկացումներին լրացուցիչ կերպով 35 միլիոն ռուբլի միութենական հանրապետությունների լուսժողկոմատների նախահաշիվներով։

### 6. Մանկապարտեզների ղեկավարման կարգի փոխման մասին.

22. Փոխել ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թվի հուլիսի 6-ի վորոշումը (Օրենքն. Ժող. ԽՍՀՄ՝ № 35, 1935 թ. հոդվ. 309). բոլոր մանկապարտեզների կառավարումն ու ղեկավարումը միութենական հանրապետությունների լուսժողկոմատների սիստեմում կենտրոնացնելու մասին և տնտեսական ժողկոմատների հիմնարկությունների ու ձեռնարկությունների իրավասության հանձնել այն մանկապարտեզները, վորտեղ պահվում են այդ հիմնարկությունների և ձեռնարկությունների բանվորների և ծառայողների յերեխաները, լուսժողկոմատների իրավասության տակ թողնելով միայն այն մանկապարտեզները, վորոնք սպասարկում են իրենց մանկապարտեզները չունեցող մանր հիմնարկությունները և ձեռնարկությունները։ Մանկապարտեզների անմիջական ղեկավարումը դնել այն ձեռնարկության կամ հիմնարկության վարչության



վրա, վորտեղ գտնվում է մանկապարտեզը, ներգրավելով այդ ձեռնարկությունների ու հիմնարկությունների ֆաբգործկոմներին և կոմյերիտական կազմակերպություններին միութենական հանրապետությունների լուսժողկոմատներին վերապահել մանկավարժական ընդհանուր ղեկավարությունը, մանկապարտեզների ցանցի ճիշտ կառուցման հսկողությունը և մանկավարժական կադրերի պատրաստումը։

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պետք է վորոշի մանկապարտեզների հանձնման ու ֆինանսավորման կարգը, ինչպես նաև նոր մանկապարտեզների կառուցման ու ֆինանսավորման կարգը՝ մանկապարտեզների ղեկավարման ու կառավարման համար նոր սահմանված սիստեմի առնչությամբ։

### 7. Վերոհիշյալ միջոցառումների ֆինանսավորման մասին.

23. Ըստ ներկա վորոշման, 1936 թվի համար պետական և տեղական բյուջեներով ու սոցիալական ապահովագրության բյուջեյով արդեն հատկացված 1.481,3 միլիոն ռուբլուց դուրս ծննդաբերական մահճակալների, մանկաբարձական կետերի, մանկամսուրների, կաթի խոհանոցների և մանկապարտեզների համար 1936 թվին այդ հիմնարկությունների ցանցի շինարարության ու ծավալման համար հատկացնել 692,8 միլիոն ռուբլի, հատկացումների ընդհանուր գումարը 1935 թվի 875 միլիոն ռուբլու դիմաց հասցնելով 2.174,1 միլիոն ռուբլու։

Մատնանշված 692,8 միլիոն ռուբլին գործադրել կառուցելու՝

ա) Ծննդաբերական մահճակալներ քաղաքներում 22,2 միլ. ռուբլի
բ) Ծննդաբերական մահճակալներ գյուղերում 23,8 միլիոն ռուբլի
գ) Մանկամսուրներ քաղաքներում 320 միլիոն ռուբլի
դ) Մանկապարտեզներ գյուղերում 221 միլիոն ռուբլի
ե) Կաթի խոհանոցներ 9 միլ. ռուբլի

} հաշվելով շինարարության ինքնարժեքի 11—տոկոսի կրճատում

Ընդամենը շինարարության համար 596 միլիոն ռուբլի

Ոպերատիվ ծախսերի համար՝

| | | |
|---|---|---|
| ա) Նոր բացվող ծննդաբերական մահճակալների և մանկաբարձական կետերի պահպանման համար | 5 | միլիոն ռուբլի |
| բ) 1936 թվի վերջում նոր կառուցված մանկամսուրների պահպանման համար | 11,8 | » » |
| գ) մանկապարտեզների գործող ցանցի ընդարձակման և բարելավման համար,—մանկապարտեզների համար օգտագործելով և հարմարեցնելով նոր տրամադրվող տարածությունները, վերանդաները և մյուս թեթև տիպի շենքերը, գոյություն ունեցող մանկապարտեզներում, բնակիչներից ազատված շենքերում փոքր նորոգում կատարելը | 30 | » » |
| Ընդամենը | 46,8 | միլիոն ռուբլի |



Կադրերի պատրաստման համար՝

| | | |
|---|---|---|
| ա) Առողջապահական ժողկոմատի մանկաբարձուհիների և բժշկական քույրերի պատրաստման համար | 15 | միլիոն ռուբլի |
| բ) Լուսժողկոմատի քաղաքային մանկապարտեզների դաստիարակ կադրեր պատրաստելու համար | 17 | » » |
| գ) Լուսժողկոմատի գյուղական մանկապարտեզների դաստիարակ կադրեր պատրաստելու համար | 18 | » » |
| Ընդամենը | 50 | միլիոն ռուբլի |

24. Ըստ ներկա վորոշման 5,6 և 8 կետերի ծնընդականների ծննդաբերական օգնությունն ավելացնելու համար հատկացնել 70,5 միլիոն ռուբլի:

25. ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պետք է նախագծված շինարարությունն ապահովի անհրաժեշտ շինարարական նյութերով, այնպես վոր ժողկոմատները մինչև ս. թ. հուլիսի մեկը կարողանան սկսել շինարարությունը:

26. Մանկապարտեզների և մանկամսուրների միատեսակ ֆինանսավորման հաստատուն կարգ սահմանելու նպատակով՝ ի փոփոխումն աշխատավարձի ֆոնդի մեկ քառորդ տոկոսի չափով «Մանկամսուրների ու մանկապարտեզների պահպանման համար ձեռնարկությունների կողմից արվող պարտադիր մու-

ծումների մասին» ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. հուլիսի 6-ի վորոշման (օրենքների ժողովածու ԽՍՀՄ № 35, 1935 թ. հոդվ. 310), 1936 թվին այդ նպատակի համար սահմանել ուղղակի հատկացում պետական բյուջեյից 300 միլիոն ռուբլի՝ համապատասխան փոփոխություններ մտցնելով տնտեսական մարմինների ու հիմնարկությունների ֆինանսական պլանների մեջ, նույնպես և պետական սոցիալական ապահովագրության բյուջեյի յեկամտի ու ծախքերի մասում:

8. Ալիմենտներ չվճարելու համար քրեական պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության օրենսդրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին.

27. Ի փոփոխումն ամուսնության, ընտանիքի և խնամակալության մասին գործող օրենքների, դեպի ընտանիքն ու ընտանեկան պարտականությունները թեթևամիտ վերաբերվելու դեմ պայքարելու նպատակով, սահմանել ամուսնալուծությունը կատարելիս բաժանվող ամուսիններին յերկուսին էլ անձամբ ԶԱԳՍ կանչելը և ամուսնալուծության մասին բաժանվողների անցագրերի մեջ նշում կատարելը:

28. Ամուսնալուծության գրանցման վճարները բարձրացնել հետևյալ չափերով՝ առաջին ամուսնալուծությունը—50 ռուբլի, յերկրորդը—150 ռուբլի, յերրորդը և հետևյալները—300 ռուբլի:

29. Ալիմենտ վորոշելիս մի յերեխայի պահպանման համար բռնագանձել դատակրի աշխատավարձի 1/4, յերկու յերեխաների պահպանման համար 1/3 և յերեք ու ավելի յերեխաների պահպանման համար դատակրի աշխատավարձի 1/2 տոկոսը:



30. Կոլտնտեսուհիների համար հաշվումը կատարել աշխօրերի նույն նորմաներով:

Յեթե ալիմենտ ստացող մայր կոլտնտեսուհին դատակրի հետ աշխատում է մի կոլտնտեսության մեջ, պարտավորեցնել կոլտնտվարչությանն աշխօրերը հաշվելիս անմիջապես հոր վաստակած աշխօրերի համապատասխան մասը (համապատասխան յերեխաների առկայության) գրանցել մոր հաշվին: Յեթե մայրն աշխատում է ուրիշ կոլտնտեսության մեջ, հոր վաստակած աշխօրերի համապատասխան մասի մոր անվամբ այդ փոխանցումը կատարվում է այն կոլտնտեսության վարչության կողմից, վորտեղ աշխատում է դատակիրը՝ աշխօրերը վերջնականապես հաշվելու ժամանակ:

31. Յերեխաների պահպանման համար դատարանի կողմից վորոշված միջոցները չվճարելու համար քրեական պատիժը բարձրացնել մինչև յերկու տարի բանտարկության, ալիմենտի վճարումից խուսափող հորը փնտրելու ծախքերը գրելով նրա հաշվին:

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Ի. ՈՒՆՇԼԻԽՏ

Հրապարակված է ԽՍՀ Միության և Համառուսական Կենտգործկոմի 1936 թվի հունիսի 28-ի լրաբերի № 149 և 1936 թվի օրենքների ժողովածուի № 34, հոդվ. 309:

# ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1936 ԹՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի № 76/1813 ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հղիության դրդապատճառներով աշխատանքի ընդունելուց հրաժարվելու և նույն պատճառով աշխատավարձն իջեցնելու համար քրեական պատասխանատվության մասին.

*ԽՍՀ Միության Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի «Աբորտներն արգելելու, ծննդականների նյութական օգնությունն ավելացնելու, բազմազավակ ընտանիքավորներին պետական օգնություն սահմանելու, ծննդաբերական տների, մանկամսուրների և մանկապարտեզների ցանցի ընդարձակման, ալիմենտները չվճարելու համար քրեական պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության օրենսդրության մեջ մի քանի փոփոխություններ մտցնելու մասին» վորոշման յերկրորդ բաժնի 9-րդ հոդվածի համաձայն (ԽՍՀՄ 1936 թվի Որ. ժող. № 34, հոդ. 309) ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են.*

*Առաջարկել միութենական հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդներին միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքերի մեջ*



*հոդված մտցնել, վորը պատիժ պետք է սահմանի, ուղղիչ — հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամկետով կամ մինչև 1.000 ռուբլի տուգանք՝ հղիության դրդապատճառներով կանանց աշխատանքի ընդունելուց հրաժարվելու և նրանց աշխատավարձը իջեցնելու համար:*

*Հիշյալ խախտումների կրկնողության դեպքում պատիժը կարող է բարձրացվել մինչև յերկու տարի ազատազրկման:*

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ՝ Ա. ՉԵՐՎՅԱԿՈՎ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի քարտուղար՝ Ի. ԱԿՈՒԼՈՎ

*Մոսկվա, Կրեմլ, 5 հոկտ. 1936 թիվ*

№ 76-1813

(*Որ. ժող.* № 51, *հոդվ.* 419)

«Հաստատում եմ»
Խ. Ս Հ Մ. Առողջապահության Ժողովրդական կոմիսար Գ. Կամինսկի
28 նոյեմբերի 1936 թիվ

# ԱԲՈՐՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

## Ա. Աբորտները թույլատրելու բժշկական հանձնաժողովը.

ա) Վարում է 1) հանձնաժողովի ակտի գիրքը (ձև № 1 և 2) աբորտներ կատարելու թույլտվության ակտերը (ձև № 2): Ակտը գրվում է յերկու օրինակից, վորոնցից յուրաքանչյուրը պետք է հաստատվի հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրություններով: Ակտի մեկ օրինակը տրվում է հղի կնոջ ձեռքը՝ ներկայացնելու համար վորոշ (ըստ Առբաժնի կողմից սահմանված ցուցակի) բժշկական ստացիոնար հաստատության, վորտեղ պետք է կատարվի աբորտը: Ակտի մյուս օրինակը մնում է հանձնաժողովի գործերում:

բ) Ներկայացնում է մարզային (յերկրային) Առբաժինների, վիճբաժնին Ավտոնոմ ԽՍՀՄ Առժողկոմատների միութենական հանրապետությունների, վորոնք չունեն մարզային բաժանում,, Առժողկոմատներին,—ըստ պատկանելիության—բժշկական հանձնաժողովի ամսական հաշվետվությունը՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսի յերեքին (ձև № 3):



Քաղաքային հանձնաժողովները քաղաքային Առբաժնին հաշվետվություն են ներկայացնում նույն ժամկետին (ձև № 3): Վերջինս ներկայացնում է մարզային (յերկրային) Առբաժնին, Ավտոնոմ ԽՍՀ ԽՍՀանրապետությունների Առժողկոմատներին,— ըստ պատկանելիության՝ ամփոփ հաշվետվություն այն ձևով, վորը սահմանված է մարզի համար (ձև № 4):

## Բ. Բժշկական հաստատությունները,

վորոնք աբորտներ են կատարում և բժշկում են բուժական հաստատությունից դուրս աբորտը սկսված հիվանդների, տանում են՝ 1) յուրաքանչյուր աբորտի դեպքի հիվանդության պատմությունը. այն հիվանդների, վորոնք բուժհաստատություններ են ընդունվել բժշկական հաստատությունից դուրս սկսված աբորտով. հիվանդությունների պատմությունը պահպանվում է հատուկ կարտոտեկայում. 2) աբորտի հաշվառման քարտը (ձև № 5) (ինչպես լրիվ արհեստական, նույնպես և բուժհաստատությունից դուրս սկսված աբորտի).

3) Լրիվ արհեստական աբորտների օպերացիաների ժուռնալ (ձև № 6): Բուժհաստատություններն ուղարկում են շրջանային (քաղաքային) առբաժիններին աբորտի հաշվառման քարտերը յուրաքանչյուր ամսի 5-ին նախորդ ամսվա համար:

## Գ. Շրջանային (քաղաքային) Առբաժինը

ուղարկում է մարզային (յերկրային) առբաժնի Վիճբաժնին, Ավտոնոմ ԽՍՀ Առժողկոմատին, մարզային բաժանում չու–

նեցող ԽՍ Հանրապետության Առժողկոմատին — ըստ պատկանելիության, արտոնի հաշվառման բոլոր քարտերը (բոլոր բուժական հաստատություններից) մինչ ու քան նախորդ ամսվան հաջորդող՝ ամսի տասը:

դ. Քաղառբաժինն ուղարկում է մարզային (յերկրային) առբաժնի վիճակագրական բաժնին, Ավտոնոմ ԽՍՀ Առժողկոմատին և մարզային բաժանում չունեցող ԽՍՀ Առժողկոմատին — ըստ պատկանելիության՝ 1) արտոնի հաշվառման քարտերը հաշվետու ամսվան հաջորդող ամսի 15-ին, 2) ամսվա հաշվետվության հանձնաժողովի աշխատանքի մասին և կատարված արտոնների մասին (ձև № 4)— հաշվետու ամսվան հաջորդող՝ ամսի 10-ին:

ե) Մարզային (յերկրային) առբաժինները, Ավտոնոմ ԽՍՀ Առժողկոմատները ա) ուղարկում են ԽՍՀ Առժողկոմատի վիճակագրական բաժնին հաշվետվություն՝ հանձնաժողովի աշխատանքի և կատարված արտոնների մասին—հաշվետու ամսվա հաջորդ ամսի 20-ին:

Հաշվետվությունը կազմվում է՝

1. Հանձնաժողովների հաշվետվությունների,

2. Քաղաքային Առբաժինների ամսվա հաշվետվությունների և

3. Արտոնի հաշվառման քարտի մշակման արդյունքների հիման վրա (բ) կատարում է հաշվային քարտերի խորը մշակում (տես Զ բաժին կետ «բ»)

### Զ. ԽՍՀ Առժողկոմատները՝

ա) ուղարկում են № 4 ձևով ամսվա հաշվետվություն ԽՍՀ Միության Առժողկոմատի վիճակագրական բաժնին — հաշվետու ամսվա հաջորդ ամսի 30-ին.

բ) կատարում են հաշվետու քարտերի խորը մշակումը՝ ԽՍՀ Միության Առժողկոմատի ցուցմունքներով և ծրագրով՝ համաձայնեցված Ժողովրդա-տնտեսական Հաշվառման Կենտվարչության հետ:

Ցերեսի կողմը

Ձև № 1
Հաստատված է
ԽՍՀՄ Պետպլանի ԺՏՀՎՎ
կողմից 1936 թվի նոյեմբերի
28 № 767

# ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱԿՏԵՐԻ ԳԻՐՔ

Հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ տրվող դիմումների քննության մասին

Հրջանի

. . . . . . . . . . . . ________

քաղաքի

. . . . . մարզի (յերկրի), Ավտոնոմ ԽՍՀ



ՀԵՏԵՎԻ ԿՈՂՄԸ

| NN ըստ կարգի | Դիմումներ ստանալու ամսաթիվը | Ազգանունը, անունը, հայրանունը | Տարիքը | Մշտական բնակավայրի հասցեն (մշտապես ապրում է քաղաքում, գյուղում) | Հղիության ժամկետը | Դիագնոզը (համաձայն աբորտների բժշկական ցուցմունքների և հակացուցմունքների անվանացուցակի, | Հանձնաժողովի յեզրակացությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

1. Հանձնաժողովի յուրաքանչյուր նիստում, գրանցումներից առաջ հիշատակվում է նիստի ամսաթիվը։ Բոլոր դիմումները և տվյալ նիստում բժշկական քննությունների արդյունքները գրելուց գրանցելուց հետո, գրանցումները վավերացվում են Հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրություններով։

2. 7-րդ սունյակում տրվում է դիագնոզը՝ներկայացված տեղեկանքները, անալիզները, ռենտգենոգրերը և այլն, համարակալվում են ակտի գրքի գրանցման հերթական համարով, ծալվում և պահվում են Հանձնաժողովի հատուկ թղթապանակում։

3. 8-րդ սունյակում գրվում է Հանձնաժողովի յեզրակացությունը՝ աբորտը թույլ տալու դեպքում „Աբորտը թույլատրված է ցուցմունքների անվանացանկի . . . . կետի հիման վրա“ (Հղիության, արհեստական ընդհատման օպերացիայի համար, հաստատված ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից). մերժման դեպքում ա) «մերժված է ցուցմունքների բացակայության պատճառով» կամ բ) „մերժված է հակացուցմունքների անվանացուցակի . . . կետի հիման վրա։

Ձեվ № 2

Հաստատված է ԽՍՀՄ Պետպլանի
Ժ. Տ. Կ. Վ. կողմից 1936 թվի
նոյեմբերի 28-ին № 767

## ԱԿՏ № . . . .

«. . .» . . . . . . 193 . . թ. տրված է
. . . . . . . . . . . . . մարզի
(երկրի) շրջանի
Ավտոնոմ ԽՍՀ . . . . . . . . ________
քաղաքի

հանձնաժողովի կողմից

քաղաքացուհի . . . . . . . . . . .
(անունը, հայրանունը, ազգանունը)
. . . տարեկան, վորն ունի . . . . . . հղիություն
(ժամկետը)

առ այն, վոր նրան թույլատրված է կատարել հղիության արհեստական ընդհատում

Հիմք՝ մանրամասն դիագնոզը . . . . .

. . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . .

աբորտի առթիվ բժշկական ցուցմունքների . .
անվանացուցակի . . . . հերթական համարը . . .

Եթե կան հակացուցմունքներ,—հիշատակել յեվ նշել աբորտը թույլ տալու դրդապատճառները . .

. . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . .



Տրված է ներկայացնելու համար . . . .

. . . . . . . . . . . . .
(բուժ-հաստատության անունը)

. . . . . . . . . . . . .

Կնիքի . Հանձնաժողովի նախագահ՝
տեղը Հանձնաժողովի անդամներ՝

Ցերեսի կողմը

Ձև № 3

*Հաստատված է ԽՍՀՄ Պետպլանի Ժ. Տ. Հ. Կ. Վ. կողմից 1936 թվի նոյեմբերի 28-ին № 767*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բժշկական հանձնաժողովի աբորտի մասին տրված դիմումների քննության վերաբերյալ

193 . . *թվի* . . . . . *ամսվա համար*

*Ուղարկվում է քաղաքային, մարզային (երկրային) առողջբաժիններին, մարզային բաժանում չունեցող Ավտոնոմ ԽՍՀ Առժողկոմատին, ըստ պատկանելիության՝ հաշվետու ամսվան հաջորդող՝ ամսի 3-ին:*

. . . . . . *մարզի (երկրի) Ավտոնոմ ԽՍՀ*

*շրջանի*

. . . . . . . . . . . ______

*քաղաքի*

1. *Աբորտի մասին տրված դիմումների թիվը* . . :
2. *Աբորտ կատարելու առթիվ տրված թույլտվությունների քանակը* . . . . *Այդ թվում քաղաքում ապրողներին* . . . . *գյուղական վայրերում ապրողներին* . . . . . . .
3. *Այն անձանց թիվը, որոնց աբորտը չի թույլատրված* . . . . *Այդ թվում ըստ բժշկական հակացուցումների* . . . . . . .

Հանձնաժողովի նախագահ՝

« . . . . » . . . . . 193 . . . *թ.*



*ՀԵՏԵՎ ԿՈՂՄԸ*

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼՐԻՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱԲՈՐՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԸՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ

| №№ Ըստ կարգի | Հիվանդությունների անունը և նրանց խմբերը | Թույլտվությունների քանակը | Կատարված աբորտների թիվը |
|---|---|---|---|
| 1 | Սրտի և արյունատար անոթների ծանր և կայուն օրգանական հիվանդություններ . . . . . . | | |
| 2 | Երիկամունքների բորբոքման դեգեներատիվ և կարծրացող փոփոխությունների կայուն ձևեր, նրանց ֆունկցիաների սահմանափակմամբ | | |
| 3 | Երկկողմանի նեֆրոլիտիազիս . . . . | | |
| 4 | Թոքախտ . . . . . . . . . . . | | |
| | ա) բաց ձևերը . . . . . . . . | | |
| | բ) փակ ձևերը, կայուն ինտոքսիկացիաներով. | | |
| 5 | Մյուս օրգանների թոքախտ . | | |
| 6 | Լյարդի խրոնիկական պարենխիմատոզային հիվանդություններ . . . | | |
| 7 | Բազեդովի հիվանդություն . . . . . | | |
| 8 | Չարորակ արնապակասություն . | | |
| 9 | Լեյկոզներ (սպիտակարյունություն) . . | | |
| 10 | Չարորակ ուռուցքներ . . . . . . . | | |
| 11 | Ընկնավորություն . . . . . . . . | | |
| 12 | Աչքերի հիվանդություններ . . . | | |
| և | ա) ռետինիտներ և նեվրիտներ | | |
| 13 | բ) եղջերաթաղանթի հիվանդություններ | | |
| 14 | Կոնքի և հեշտոցի անոմալիա և դեֆորմացիա . . . . . | | |
| 15 | Ժառանգական հիվանդություններ . . այդ թվում՝ | | |
| | Գեմոֆիլիա . . . . . . . . . . . . . . . . | | |
| | . . . . . . . . . . . . . . . . . . . . | | |
| | Ընկնավորություն . . . . . . . . . . . . | | |
| | . . . . . . . . . . . . . . . . . . . . | | |

Ցերեսի կողմը

Ձեվ № 4
Հաստատված է ԽՍՀՄ
Պետպլանի ԺՏՀՎ
կողմից 1936 թվի նո-
յեմբերի 28-ին № 767

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովի աշխատանքի մասին՝ աբորտների առթիվ տրված դիմումների քննության յեվ կատարված աբորտների առթիվ

193 . . . թ. . . . . . . . . . ամսի համար

Ուղարկվում է քաղաքային մարզային (յերկրային) Առբաժինների, Ավտոնոմ ԽՍՀ Առժողկոմատների կողմից՝ ԽՍՀ Առժողկոմատներին — հաշվետու ամսվա հաջորդ ամսի 20-ին. ԽՍՀ Առժողկոմատների կողմից՝ ԽՍՀ Միության Առժողկոմատին — հաշվետու ամսվա հաջորդ ամսի 30-ին:

մարզ (յերկիր) ԱԽՍՀ

. . . . . . . . . ______________

քաղաք

1. Առբաժնի կողմից սպասարկվող տերիտորիայում գտնվող հանձնաժողովների թիվը . .
1. Աբորտի մասին տրված դիմումների թիվը . .



3. Աբորտ անելու առթիվ տրված թույլտվությունների թիվը . . . . . . . .
   այդ թվում քաղաքում ապրողների . . .
   գյուղական վայրերում ապրողների . . .
4. Այն անձանց թիվը, վորոնց աբորտը չի թույլ տրված . . . . . . . .
   այդ թվում ըստ բժշկական հակացուցմունքների . . . . . . . . . .
5. Կատարված լրիվ արհեստական աբորտների թիվը . . . . . . . . . .
   այդ թվում քաղաքում ապրողների . . .
   գյուղական վայրերում ապրողների . . .
6. Սկսված աբորտով բուժհաստատություններ մտածների թիվը . . . . . . .
   այդ թվում քաղաքում ապրողներ . . .
   գյուղական վայրերում ապրողներ . . .
7. Սկսված աբորտով մտածների ընդհանուր թվից՝
   ինքնաբերաբար սկսվածներ . . . . .
   յեվ արհեստականորեն սկսված . . . .
8. Աբորտների թիվը, վորոնք մահով են վերջացել և սկսված են յեղել բուժհաստատություններից դուրս՝ լրիվ արհեստական ձևով . . .

«. . .» . . . . . . 193. . . թվ

Առբաժնի վարիչ՝

ՀԵՏԵՎԻ ԿՈՂՄԸ

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ

| №№ ըստ կարգի | Հիվանդությունների անունը և նրանց խմբերը | Թույլտվությունների քանակը | |
|---|---|---|---|
| 1 | Սրտի և արյունատար անոթների ու կայուն օրգանական հիվանդություններ . | | |
| 2 | Ցերիկամունքների բորբոքման չեղերատիվ և կարծրացող փոփոխությունների կայուն ձևեր, նրանց ֆունկցիաների սահմանափակմամբ. | | |
| 3 | Ցերկկողմանի նեֆրոլիտիազիս . . . | | |
| 4 | Թոքախտ . . . . . . . . . | | |
| | ա) բաց ձևերը . . . . . . . | | |
| | բ) փակ ձևերը, կայուն ինտոքսիկացիաներով . . . . . . . | | |
| 5 | Մյուս օրգանների թոքախտ . . . | | |
| 6 | Լյարդի խրոնիկական պարենխիմատոզային հիվանդություններ . | | |
| 7 | Բազեդովի հիվանդություն . . . . | | |
| 8 | Զարորակ արնապակասություն . . . | | |
| 9 | Լեյկոզներ (սպլենոկարնություն) . . | | |
| 10 | Չարորակ ուռուցքներ . . . . . . | | |
| 11 | Ընկնավորություն . . . . . . . | | |
| 12 | Աչքերի հիվանդություններ . . | | |
| | ա) ռետինիտներ և նեվրիտներ . . | | |
| 13 | բ) յեղջերաթաղանթի հիվանդություններ . . . . . . . . | | |
| 14 | Կոնքի և հեշտոցի անոմալիա և դեֆորմացիա . . . . . . . . | | |
| 15 | Ժառանգական հիվանդություններ . . | | |
| | այդ թվում՝ | | |
| | Հեմոֆիլիա . . . . . . . . . | | |
| | Ընկնավորություն . . . . . . . | | |
| | . . . . . . . . . . . . . . . . . | | |
| | . . . . . . . . . . . . . . . . . | | |
| | . . . . . . . . . . . . . . . . . | | |



Երեսի կողմը

Ձև № 5
Հաստատված է ԽՍՀՄ
Պետպլանի ԺՏՀՎ կողմից 1936 թվի նոյեմբերի 28-ին № 767

## ԸՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱԲՈՐՏԻ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԺՈՒՐՆԱԼ

. . . . . . . . . . . . . . . . .

(Բուժական հաստատության անունը)

Բնակավայրը . . . . . . . . շրջանը . . .

. . . . . . . . . . Մարզի, երկրի, Ավտոնոմ ԽՍՀ . . . . . . . . . .

ՀԵՏԵՎԻ ԿՈՂՄԸ

| | | | |
|---|---|---|---|
| №№ ըստ կարգի | | 1 | |
| Հիվանդի ընդունելության օրն ու ժամը | | 2 | |
| Ազգանունը, անունը, հայրանունը | | 3 | |
| Տարիքը | | 4 | |
| Հղիության ժամկետը | | 5 | |
| Ըստ հերթի վո՞ր հղիությունն է | | 6 | |
| Ում կողմից է տրված աբորտի թույլտվությունը | | 7 | |
| Թույլտվության № | | 8 | |
| Հիվանդության անունը, վորը հիմք է հանդիսացել աբորտի թույլտվության, նշելով նաև աբորտի համար ցուցմունքների անվանացանկի հերթական համարը | | 9 | |
| Հիվանդի ընդհանուր դրությունը ընդունվելիս | | 10 | |
| Ե՞րբ է կատարված աբորտի օպերացիան | | 11 | |
| Օպերացիայի ձևերը | | 12 | |
| Բարդություններն օպերացիայի ժամանակ | | 13 | |
| Ըստ հիմնական հիվանդության | Բարդություններ՝ օպերացիայից հետո | 14 | |
| Հետօպերացիոն բնույթի | | 15 | |
| Դուրս գրվելու օրը | | 16 | |
| Դրությունը դուրս գրվելիս | | 17 | |



Ձև № 6
Հաստատված է ԽՍՀՄ
Պետպլանի ԺՏՀԿՎ կողմից 1936 թվի նոյեմբերի 28-ին № 767

## ԱԲՈՐՏԻ ՔԱՐՏ

Ուղարկվում է ամեն ամիս՝ 1) բուժհաստատության կողմից՝ շրջանային (քաղաքային) առբաժնին՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսի 5-ին, 2) շրջանային (քաղաքային) առբաժնին՝ հաշվետու ամսվան (յերկրային) առբաժնին, Ավտոնոմ ԽՍՀ Առժողկոմատին և մարզային բաժանմունք չունեցող ԽՍՀ Առժողկոմատին՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ին, 3) մարզային (յերկրային) առբաժինների Ավտոնոմ ԽՍՀ Առժողկոմատների կողմից ըստ ԽՍՀ Առժողկոմատի պահանջի:

. . . . . . . . . . . . . .

(Բուժական հաստատության անունը)

Բնակավայրը . . . . . շրջանը . . . .

Մարզ (յերկիր), Ավտոնոմ ԽՍՀ . . . . . .

«. . . .» . . . . . . . . 193. . . թ. ընդունվել է հիվանդը

. . . . . . . . . . . . . .

(Ազգանունը, անունը, հայրանունը)

Ապրում է մշտապես գյուղում, քաղաքում (ընդգծել)

. . . . . . . . . . . . . .

Ինքնաբերաբար աբորտի առթիվ, արհեստական աբորտի առթիվ, վորն սկսվել է բուժական հաստատությունից դուրս՝ աբորտի կատարելու համար ըստ բժշկական ցուցմունքի (ընդգծել)

Լրիվ արհեստական աբորտ անելու հիմքը․ դիագնոզ . . . . . . . . . . . անվանացուցակի № . . . հանձնաժողովի կողմից թույլտվության տված № . . . . . . . . .

Հիվանդի դրությունն ընդունելիս․ առանց ջերմի, ջերմով սեպտիկական յերևույթներ . . . . .

Տարիքը . . . հղիության ժամկետը . . . . .

ըստ հերթի վո՞ր հղիությունն է . . . . . .

առաջներում ծնե՞լ է թե՞ վոչ . . . . . .

աբորտներ ունեցե՞լ է, թե՞ վոչ . . . . . .

կենդանի յերեխաների թիվը . . . . . . .

Հիվանդն աշխատո՞ւմ է (վորտեղ և աշխատում) . .

սովորո՞ւմ է (վորտեղ) . . . . . . . .

Ի՞նչով է զբաղվում, յեթե չի աշխատում ու չի սովորում . . . . . . . . . . . .

Յե՞րբ է կատարված աբորտի ոպերացիան . . .

ոպերացիայի ձևը . . . . . բարդությունները ոպերացիայի ժամանակ . . . . . . .

. . . . . . . . . . . . . .

Ոպերացիայից հետո . . . . . . . .

Վախճանը . . . . . . . . . . .

Դուրս գրվելու օրը . . . . . . . . .

Բուժող բժշկի ստորագրությունը



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Խ.Ս.Հ.Մ. Առժողկոմատի 1936 թվի նոյեմբերի 28-ի հրահանգչական նամակը՝ աբորտների բժշկական հսկողության մասին. . . . . . . . . . . . . . . . 3

Խ.Ս.Հ.Մ. Ժողկոմխորհի 1936 թվի նոյեմբերի 22-ի № 2012 վորոշումը աբորտների թույլատվության կարգի մասին ըստ բժշկական ցուցմունքների . . . . . . . . . 6

Հղիության արհեստական ընդհատման (աբորտի) ոպերացիայի թույլատվության կարգի կանոնադրությունը . . 10

Բժշկական ցուցմունքները հղիության արհեստական ընդհատման (աբորտի) ոպերացիայի առթիվ։ Հղիության արհեստական ընդհատման (աբորտի) ոպերացիայի հակացուցմունքները . . . . . . . . . . . . . 17

Խ.Ս.Հ.Մ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1936 թվի հունվարի 27-ի վորոշումը՝ աբորտներն արգելելու, ծննդկանների նյութական օգնությունն ավելացնելու, բազմանդամ ընտանիքավորներին պետական օգնություն սահմանելու, ծննդաբերական տների, մանկամսուրների և մանկապարտեզների ցանցի ընդարձակման, ալիմենտներ չվճարելու քրեական պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության օրենսդրության մեջ մի քանի փոփոխություններ մտցնելու մասին . . . 21

Խ.Ս.Հ.Մ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1936 թվի հոկտեմբերի 5-ի վորոշումը՝ հղիության դրդապատճառներով աշխատանքի ընդունելուց հրաժարվելու և նույն պատճառով աշխատավարձն իջեցնելու համար քրեական պատասխանատվության մասին . . . . . . . . . . . . . . 40

Աբորտների հաշվառման ու հաշվետվության կանոնները . . . . . . . . . . . . . . 42

Աբորտների դոկումենտացիայի և հաշվառման ձևերը.

1. Բժշկական հանձնաժողովի ակտերի գիրքը . . 47
2. Բժշկական հանձնաժողովի ակտը . . . . . 49
3. Բժշկական հանձնաժողովի հաշվետվությունը . 51
4. Հաշվետվության հանձնաժողովի աշխատանքի մասին . . . . . . . . . . . . . . 53
5. Ոպերացիաների ժուռնալը . . . . . . . . 57
6. Աբորտի քարտը . . . . . . . . . 59

Թարգմանեց՝ Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
Թարգմանությունը խմբագրեց՝ Ք. ՔՈՉԱՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Գ. ԴՈՆԴԱՐՈՎ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Сдано в производство 10/XI-37 г.
Разрешено к печати 28/I-38 г.
Колич. печат. знаков 107.160
Колич. печ. листов 3¾

Главлит № 418 Ст. 364 А—6. Тип. „III Интернационал",
Баку, ул. Саратовца-Ефимова, 29 Зак. № 4056. Тираж 1250.

ՀՀ Ազգային գրադարան
NL0266762

7899

2840

Գ Ի Ն Ը 80 Կ.

# О медицинском контроле АБОРТОВ

ИНСТРУКТИВНОЕ ПИСЬМО НАРКОМЗДРАВА СОЮЗА ССР ОТ 28 НОЯБРЯ 1938 ГОДА.

Постановления Правительства.